

Գ. Գարեգինյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ քերականությունն պատմության մեջ շաղկապների կազմության և այլ խոսքի մասերի հետ նրանց ունեցած հարաբերակցության հարցերը հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Մինչդեռ առանց այդ հարցերի պարզաբանման հնարավոր չէ շաղկապների ծագման և մանավանդ զարգացման հեռանկարների վերաբերյալ որևէ հիմնավոր եզրակացության հասնել: Անհրաժեշտ է պարզել, թե լեզվի զարգացման տարբեր շրջաններում շաղկապների կազմության ո՞ր տեսակներն են տարածված եղել և դրանցից որո՞նք են, որ հետագայում լայն կիրառություն են գտել և այժմ էլ զարգացման մեծ հեռանկարներ ունեն: Այդ հարցերի քիչ թե շատ բազմակողմանի ընդգրկման և հաջող լուծման համար անհրաժեշտ է միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնել շաղկապների և այլ խոսքի մասերի հարաբերակցության հարցին, քանի որ միայն այդ միջոցով հնարավոր կլինի բացատրել շաղկապների կազմության այն տեսակները, որոնք նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերին են հատուկ:

Փաստերը ցույց են տալիս, որ արդի հայերենի որոշ շաղկապներ հարաբերակցում են այլ խոսքի մասերի՝ դերանունների, մակբայների, եղանակավորող բառերի և կապերի հետ: Այդ հարցի վերաբերյալ կատարած մեր քննությունը ցույց է տալիս, որ հարաբերակցությունը լինում է լիակատար և մասնակի. նայած թե շաղկապական դերով հանդես գալիս հարաբերակցող բառը կորցնում է խոսքի մասային իր նախորդ արժեքը, թե առանց զրկվելու այդ արժեքից՝ կապակցական դեր է կատարում:

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հարաբերակցության այս երկու տեսակները ներկայացնում են լեզվի շաղկապական միջոցների զարգացման տարբեր փուլեր, երբ այս կամ այն բառը նախ սկսվում է գործածվել խոսքի մասային համատեղ արժեքներով (մասնակի հարաբերակցություն) և այնուհետև, աստիճանաբար ամրանալով կապակցական իր պաշտոնում, ձեռք է բերում խոսքի մասային զուգահեռ արժեքներով (լիակատար հարաբերակցություն) հանդես գալու շարահյուսական հատկանիշ և կիրառվում է, օրինակ, թե՛ որպես դերանուն, թե՛ որպես շաղկապ, առանց այդ էրկու գործածությունները շփոթելու միմյանց հետ: Ի վերջո, այդ պրոցեսը հանգեցնում է այն բանին, որ լեզվի մեջ զուգահեռ կիրառություններ ունեցող որոշ բառեր, կորցնելով նաև խոսքի մասային իրենց նախորդ արժեքը, սկսում են հանդես գալ միմիայն որպես շաղկապ: Այս արդեն այլ խոսքի մասերից շաղկապների առաջացման վերջին փուլն է:

Լեզվի շաղկապական միջոցների առաջացման ու զարգացման այս պրոցեսը հատուկ է ոչ միայն արդի հայերենին, այլև հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններին: Եվ դա շատ հասկանալի է, քանի որ լեզուն անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Զպետք է կարծել, սակայն, որ այս երեք փուլերը

կանոնավորապես հաջորդում են միմյանց, չեն զրգացման նույն շրջանում մենք հանդիպում ենք միաժամանակ շաղկապների առաջացման հիշյալ երեք ձևերին:

Այսպիսով, եթե ինչպես արդի հայերենի, այնպես էլ լեզվի զարգացման նախորդ շրջանների, ինչպես նաև դրարարի համար հատկանշական է հարաբերակցության վերոհիշյալ պրոցեսը, ապա պարզ է միանգամայն, որ արդի հայերենի շաղկապների կազմության մասին խոսելիս պետք է անպայման հաշվի առնել այլ խոսքի մասերի հետ ունեցած նրանց ծագումնաբանական կապը և երբեք շաղկապներին հատուկ ու բնորոշ չհամարել կազմության այն եղանակները, որոնք հատուկ են, ասենք, շաղկապների հետ հարաբերակցող մակրայններին կամ դերանուններին:

Այսպես, արդի հայերենում այլապես բառը բացառապես շաղկապ է: Կասկած չի հարուցում նաև նրա մակրայական ծագումը: Պարզ է ուրեմն, որ այդ բառը անցել է զարգացման վերոհիշյալ ուղին: Այդ իսկ պատճառով այդ շաղկապի կազմության մասին խոսելիս մենք անպայման պիտի նշենք նրա ծագումնաբանական նույնությունը դրարարյան այլապես մակրայի հետ, որով կարողարանա նաև -պես մակրայակերտ ածանցով ունեցած նրա կազմությունը:

Այժմ անցնենք բուն նյութին, այսինքն քնենք ժամանակակից հայերենի շաղկապները ըստ կազմության:

ՊԱՐՋ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Արդի հայերենի պարզ շաղկապները, իրենց առաջացմամբ կապված լինելով հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների հետ, կազմությամբ միատարր չեն և բաժանվում են հետևյալ տեսակների.

1. Բուն արմատականներ՝ և, ու, որ, թե, բայց, կամ, քան, այլ, էլ, ապա, եթե, իսկ, ոչ:

2. Ներմեմի բաղադրյալներ, որոնք այժմ դիտակցվում են որպես արմատական շաղկապներ՝ եթե, ևս, սակայն և այլն:

3. Բառահարաբերական որևէ ձևով կազմվածներ՝ չնայած, կարծես և այլն:

Սրանցից ծագմամբ ամենահինն են բուն արմատական շաղկապները, որոնք հիմնականում ընդհանուր են ամբողջ հայերենի համար: Թե՛ դրարարում, թե՛ միջին հայերենում և թե՛ աշխարհարարում մենք հանդիպում ենք այդ արմատական շաղկապներին: Նույնիսկ բարբառներում, որոնք, որպես կանոն, չեն պահպանել դրարարյան այլ կազմություն ունեցող շաղկապներից զրեթե և ոչ մեկը, մենք հանդիպում ենք ու, թե, ու, երբ, կամ (շատ հազվադեպ), ապա և արդի հայերենում չպահպանված, սակայն բարբառներում շատ տարածված նե, նր (<գրր. նա) շաղկապներին: Այս փաստը բավական է ցույց տալու համար, թե որքան դիմացկուն են բուն արմատականները, որ նույնիսկ փոխառյալ շաղկապներով շատ հարուստ հայերենի բարբառներում դուրս չեն մղվել դրարարյան մյուս շաղկապների պես:

Հիշատակության արժանի է նաև այն հանգամանքը, որ այս շաղկապների մեծ մասը կապվում է հնդեվրոպական արմատների հետ: Սա վկայում է այն մասին, որ նրանք ծագմամբ շատ ավելի հին են, քան այլ կազմություն ունեցող շաղկապները: Պետք է նշել, սակայն, որ հայերենի այս շաղկապները ուղղա-

կիրորեն չեն կապվում հնդեվրոպական շաղկապների հետ, քանի որ, ըստ Մեյլի, հնդեվրոպական շրջանից միայն երկու շաղկապ է մնացել հին լեզուներում, որոնք հետագայում անհետացել են նաև այդ լեզուներից¹։ Կասկած չի կարող լինել ուրեմն, որ հայերենի արմատականները մասնակի և լիակատար հարաբերակցության ուղիով են վերածվել շաղկապների։ Այդ հաստատելու համար բերենք Արմատական բառարանից քաղված նրանց ստուգաբանությունները.

1. Ել <հնլ. épl ժնաև, ևս, սանս. apl ժնաև, դեռևս, էլ, մոտք, հպոս. aply, գնդ. apl ժհնց, ըստ, մոտք, միջոցին, հուն. επε «վրա, սրա վրա» և ալլն։ *Epl ձևի միջին աստիճանի ձայնդարձից է ծագել հայերենի արմատական²։

2. Ու շաղկապը՝ ու <օրլ, վերջին 1 ձայնավորի սովորական կորուստով։ Այս երկու դեպքերում էլ p-ն ձայնավորների միջև կանոնավոր կերպով վերածվում է լ-ի (ինչպես ovi-pa > հովիւ), որով ստանում ենք եւ, ու ձևավորը։

3. Թե <հնլ. te. հմմտ. հաքս. the, անգլ. the (շեշտյալ), լիթ. te։ Այս բառը, ըստ Մեյլի, նախապես ունեցել է թալսպես, այս ձևով՝ նշանակությունը։ Թալսպես, այս ձևով՝ նշանակությունից թեական իմաստին անցնելու օրինակ է նաև լատիներին si «եթե» շաղկապը, որը նույնպես «թալսպես» իմաստն է ունեցել՝ անշուշտ sic ձևով³։

4. Որ <հնլ. kuo հարցական և անորոշ դերանունից՝ ր մասնիկով, նախաձայնի անկումով։ Հենց գրաբարում մենք հանդիպում ենք այս բառի շաղկապական գործածություններին։

5. Ոչ. հնդեվրոպական ժագումի է՝ n+չ։ Առաջին բաղադրիչը բուն բաղադրական է, որը կապվում է հսլ. o'u, սանս. au «հակառակ» բառերին։ Այս բառը գրաբարում կրկնազոր գործածությամբ էր միայն շաղկապական արժեքով կիրառվում։

6. Ան <հնլ. *alyo-, որից ծագում է հունարեն αλλος «այլ, ուրիշ»։ Այս բառը, գրաբարում ունենալով անորոշ դերանվան և մակրայական կիրառություններ, միաժամանակ գործածվել է նաև որպես շաղկապ՝ «բայց, սակայն» և հազվապե՜ս ժնաև, ևս նշանակություններով։

ԺԱ դարից ավանդված այլ բառի այս վերջին նշանակությունն է պահպանել բարբառներում և աշխարհաբարում շատ տարածված⁴։

7. Էլ շաղկապը՝ ալ > է սովորական հնչյունափոխությամբ։

8. Քան <հնլ. kʷan ձևից. հմմտ. լատ. quam «քան, ավելի քան»։ quantus «առավել քան, որքան»։ Այս բառը գրաբարում կապական և շաղկապական գուգահեռ գործածություններ ուներ։

9. Երբ. հնդեվրոպական ժագումի բառ է և նույն է ժագումբ իբր բառի և -բար «պես» մասնիկի հետ։ Գրաբարում մեծ մասամբ դերանվանական մակրայի իմաստով է գործածվել, չնայած շաղկապական որոշ կիրառությունների հանդիպում ենք։

Ինչպես տեսնում ենք, արդի հայերենի բուն արմատական 13 շաղկապներից 9-ը հնդեվրոպական ծագում ունեն և դեպի խոր հնություն են գնում։ Պարզ

¹ A. Meillet, Linguistique historique et linguistique générale, Paris, 1914, t. I, p. 161.

² A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1903, p. 106.

Տեղեկագիր № 9-8

է ուրեմն, որ մինչև գրաբարում արձանագրվելը այդ բառերը զարգացման երկարատև ուղի են անցել և գրաբարյան շրջանում նրանցից մի քանիսը (և, ուրե, ինչպես նաև գրաբարյան զի, նա), հասնելով զարգացման վերջին աստիճանին՝ ամրացել են լեզվում միմիայն որպես շաղկապներ, իսկ մյուս մասը՝ որպես զուգահեռ արժեքներով հանդես եկող բառեր (ուր, ոչ, Բան, այլ, երբ և բարբառներում ու աշխարհաբարում շատ սովորական էլ բառը)։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ բուն արմատական շաղկապները, որպես ավելի հնատիպ և զարգացման ավելի երկարատև ուղի անցած բառեր, զերծ են խոսքի մասային համատեղ արժեքներով կիրառվելու այն հատկանիշից, որը կապակցական միջոցների նախնական շրջանին և ընդհանրապես կապակցական գերովհոր հանդես եկող բառերին է հատուկ։

Գրաբարից մինչև արդի հայերենը ընկած ժամանակաշրջանում զուգահեռ կիրառություն ունեցող վերոհիշյալ բառերը ևս պետք է զարգացման որոշ շրջան անցնեն, այս կամ այն խոսքի մասային արժեքով գործածվելու որոշ գերակշռություն ստանային։ Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ նման զարգացում եղել է։

Այսպես, գրաբարում երբ բառը շատ սակավ էր շաղկապական գործածությունում հանգես գալիս, մինչդեռ արդի հայերենում նա ժամանակային հարաբերություններ արտահայտող ամենագործածական շաղկապներից մեկն է։ Նույնպիսի զարգացում է անցել նաև ուր բառը։ Մեսրոպյան գրաբարում այս դերանվան շաղկապական կիրառությունները շատ հազվադեպ էին, սակայն այժմ նա բարդ նախադասությունների ստորադասական հարաբերություններն արտահայտող ամենագործածական շաղկապ է։

Գրաբարում զուգահեռ կիրառություններով էր հանդես գալիս նաև այլ բառը, սակայն նրա շաղկապական գործածությունները շատ ավելի քիչ էին, քան դերանվանական և մակբայական կիրառությունները։ Մինչդեռ ժամանակակից հայերենում այդ բառը հակադրական հարաբերություն արտահայտող գործածական շաղկապներից մեկն է։ Եվ վերջապես ո՛չ...ո՛չ, քե՛...քե՛ կրկնադիր գործածություն ունեցող շաղկապները ժամանակակից հայերենում լայն տարածում ստացան, մի բան, որ չի կարելի ասել գրաբարյան շրջանի մասին։

Այսպես, ուրեմն, զուգահեռ խոսքի մասային կիրառությամբ հանդես եկող գրաբարյան հնդեվրոպական ծագումի բուն արմատական շաղկապները, եթե իրենց հետագա զարգացմամբ չեն հասել միայն մի խոսքի մասի, միմիայն շաղկապի արժեքով գործածվելու աստիճանին, ապա հասել են զարգացման ալիպիսի աստիճանի, երբ գրաբարում որպես շաղկապ հազվադեպ գործածություն ունեցող որոշ արմատականներ ժամանակակից հայերենում ստացել են շաղկապական լայն գործածություն։

Բուն արմատական մյուս շաղկապներն են՝ բայց, իսկ, կամ, ապա։ Սրանցից միայն կամ շաղկապն է ստուգաբանված և նույն է կամիլ (<պհյ. kamm «կամբ. կամեցողություն») բառի հետ և բուն նշանակում է «ուղե՛ս» (տե՛ս Արմ. բո.)։ Այսպիսով, ծագած լինելով կամիլ բայից, այս շաղկապը, համատեղ գործածությամբ որոշ շրջանից հետո, արդեն Ե դարում ամրացել էր լեզվում որպես համադասական շաղկապ, բոլորովին խզելով իր կապը նախորդ խոսքի մասի հետ։

Ապա շաղկապը դարձարժույթ զուգահեռ արժեքով իր գործածվում թե՛ մակբայական և թե՛ շաղկապական։ Նույն բանը նկատում ենք նաև արդի հայերեն-

նում: Ընդ վերաբերում է իսկ բառին, ապա այն, բացի շահկապական գործածությունից, գրաբարում ունեցել է նաև գոյականի, ածականի, մակբայի և եղանակավորող բառի կիրառություններ, որոնցից արդի հայերենում պահպանվեցին միայն եղանակավորող բառի (օրինակ՝ այդ իսկ պատճառով) և շահկապի կիրառությունները:

Լեզվաբանական և քերականագիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, ըստ որի համադասությունը ավելի շուտ է ծագել, քան ստորադասությունը և որ վերջիններիս զարգացումը կապված է գլխավորապես մարդկային մտածողության զարգացման, ինչպես նաև գիր ու դրականության աճի հետ: Եթե այս տեսակետին մոտենանք հայոց լեզվի ընձեռած տվյալներով, ապա կտեսնենք, որ իրոք այդ այդպես է: Այսպես օրինակ, բուն արմատական շահկապանների մեջ, որոնք, ինչպես տեսանք, իրենց ծագմամբ ու զարգացմամբ կապված են լեզվի հնագույն շրջանի հետ, համադասական շահկապանները ավելի մեծ տոկոս են կազմում, քան ստորադասականները: Օրինակ՝ արդի հայերենի 13 բուն արմատական շահկապաններից 9-ը համադասական են, 4-ը ստորադասական: Տոկոսային այս հարաբերությունը արդեն պերճախոս կերպով վկայում է այն մասին, որ հայոց լեզվի հնագույն, նախազարարյան շրջանում համադասությունը, ինչպես նաև համադասական շահկապանները շատ ավելի տարածված էին, քան ստորադասությունը և ստորադասական շահկապանները:

Այնուհետև, զարգացման վերջին աստիճանին են հասել, այսինքն միայն որպես շահկապ են օգտագործվում համադասական շահկապաններից 5-ը, մինչդեռ ստորադասականներից միայն քե-ն է, որ չի հարաբերակցում ուրիշ խոսքի մասերի հետ: Սակայն հենց այս միակ քե-ն էլ հանդես է գալիս նաև որպես համադասական շահկապ՝ բաժանակաճ, տրոհակաճ նշանակություններով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բուն արմատական շահկապանները չափազանց հարուստ են իմաստային զանազան հարաբերություններ արտահայտելու հնարավորությամբ, քան այլ կազմություն ունեցող շահկապանները: Ինչպես ակադ. Վ. Վինոգրադովն է նշում՝ «Նրանց ձևաբանական պարզությունը և անտարալուծելիությունը հակադարձ համեմատական է նրանց շարահյուսական ֆունկցիաների բազմազանությանն ու իմաստաբանական բարդություններին»¹:

Պարզ շահկապանների մեջ են մտնում նաև երբեմնի բաղադրյալ, բայց այժմ որպես արմատական գիտակցվող այն շահկապաններ, որոնք լեզվի զարգացման տարբեր շրջաններում աստիճանաբար կորցնելով իրենց բաղադրիչ մասերի անկախությունը, այժմ դիտվում են որպես արմատականներ: Մենք հիշյալ տեսակի մեջ ենք մտցրել հետևյալ շահկապաններ՝ եթե, թեկուզ, թեպետ, հապա, մանավանդ, միայն, մինչ, սակայն, ուրեմն, ուստի, քանի, ևս:

Սրանք, կաղմված լինելով լեզվի զարգացման տարբեր շրջաններում, ներկայացնում են երբեմն այնպիսի ածանդներ, որոնք շատ վաղուց են դադարել բառակազմական արժեք ունենալուց: Մեզ հետաքրքրող որոշ հարցերի պարզաբանման համար տեսնենք. թե այդ բառերը ինչ կազմություն ունենան:

1. եթե- թե շահկապն է՝ և հավելվածով: Գրաբարում այս բառը ունեցել է

¹ В. Виноградов. Русскѣе яз. к. Москва—Ленинград. 1947, с. 70.

² Ստորադասական տվյալները չենցրել ենք Արմատական բառարանից:

հետևյալ իմաստները՝ ա) երբ որ, թե որ. բ) թե, էլ. գ) միթե, արդյոք, գուցե
դ) թե, որ: Այս նշանակություններից այժմ պահպանված է միայն թեականը:

2. Թեկուզ — նոր գրական լեզվում կազմված ձև. գործածական է միայն
սրեելյան գրականում, իրր «Լթե կուզե» (տե՛ս Արմ. բռ.):

3. Թեպետ — կազմված է րե + պետ, իրր «թէ պէտ իցէ»¹: Այս բառը ա-
վանգված է գրաբարից, Թեկուզ բառը անշուշտ այս օրինակով է կազմված:

4. Հապա — կազմված է յ + ապա ձևերից: Գրաբարում գործածվում էր
որպես մակրայ: Այժմ, մանավանդ ժողովրդական լեզվում, բացառապես շաղ-
կապական կիրառություն ունի:

5. Մանավանդ — անստույգ բառ, որ, սակայն, անշուշտ բաղադրյալ է.
ընայած ստուգաբանական քննությունը դեռ չի տվել այդ բառի բաղադրիչների
ծագումն ու կազմությունը: Գրաբարում ունի թե՛ շաղկապական և թե՛ եղանա-
կավորող բառի կիրառություն: Նույնը և արդի հայերենում: Գրաբարում կար-
նան նա՝ մանաւանդ ձևը, տոանձին գրությունը: Այժմ այդ շաղկապը միասին
է գրվում:

6. Միայն — կազմված է մի բառից՝ այն մասնիկով, ինչպես զիշեւայն.
ամենայն և այլն: Հիմնականում հանդես գալով որպես մակրայ, այս բառը
ունենր նաև շաղկապական գործածություն՝ «միայն թե, բայց միայն» նշանակու-
թյամբ: Արդի հայերենում, գրաբարի համեմատությամբ, բավական հաճախա-
կի են դարձել նրա շաղկապական կիրառությունները:

7. Մինչ — հնդեվրոպական sine (sme) ձևից, որ աճած է -նչ հնչյունա-
խմբով: Գրաբարում մակրայական համարված շատ կիրառություններ ըստ
էության շաղկապական են, ինչպես.

Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս
ո՞րպես թագաւորեմ (ՆՀԲ*, հտ. II, 276):

8. Սակայն — կազմված է սակ «պայման» բառից՝ -այն մասնիկով, նշա-
նակության զարգացման համար կարելի է համեմատել միայն, միայն րե, պայ-
մանով ու բառերի համանման իմաստային անցումը պայմանի երանգից հա-
կադրական և սահմանափակման նշանակությանը:

9. Ուրեմն — ծագում է ուր + եմն բաղադրիչներից, ինչպես որ կա երբ-եմն,
և ուստ-եմն: Հետևանքի իմաստ ունեցող այս բառի կապը տեղի նշանակու-
թյուն ունեցող ուր բառի հետ հիշեցնում է ուստի բառի համանման իմաստային
անցումը տեղի իմաստից հետևանքի, իմաստին: Որպես շաղկապ գրաբարում
քիչ էր տարածված:

10. Ուստի — կազմված է ուստ «որ տեղից» + ի: Գրաբարում ունեցել է թե՛
մակրայական և թե՛ շաղկապական գործածություն: Այս բառը արդի հայերե-
նում բացառապես որպես շաղկապ է օգտագործվում, ընայած բարրառային
ձևով հաճախ ենք հանդիպում «որտեղից» իմաստին:

11. Գանի — կազմված է քան + ի բաղադրիչներից: Գրաբարում հարցական
բառ էր և որպես շաղկապ չէր գործածվում: Արդի հայերենում տարածված է
նաև որպես շաղկապ:

12. Նվա — կազմված է և բառից՝ ս մասնիկով:

¹ Հ. վ. զ. Չալրիսիտի, Կենսականության լեզուի, Վիեննա, 1883, էջ 373:

* Նոր բառգիրք հայկական լեզուի:

Ստուգաբանական այս համառոտ քննությունից երևում է, որ այս շաղկապներից մի քանիսը իրենց բաղադրիչ մասերի անկախությունը կորցրել են այն աստիճան, որ լուրջ, գիտական վերլուծությամբ միայն կարելի է հաստատել նրանց բաղադրյալ լինելը: Գուցե նույնիսկ ավելի նպատակահամար կլինեին այս շաղկապներից մի քանիսը տեղագրել բուն արմատականների մեջ. ինչպես՝ միայն, մինչ, ուստի, քանի, սակայն, մանավանդ որ այս բառերի -այն, -նչ, -ի բաղադրիչները բառակազմական ոչ մի դեր չեն կատարում արդի հայերենում, կամ թեկուզ և գրաբարում: Դրանք առավելապես կապված են նախադրաբարյան շրջանի հետ:

Ինչպես երևաց, այս բառերից միայն մի մասն էր զրարարում որպես շաղկապ գործածվում: Մյուս մասը զուգահեռ կիրառություններ ունենալով՝ մակբայական և շաղկապական: Արդի հայերենում զուգահեռ գործածություններ ունեցող այդ բառերից մի քանիսը ձևավորվեցին որպես շաղկապներ, ինչպես ուրեմն, ուստի, ճապա, իսկ այն բառերը, որոնք գրաբարում հազվագեպ էին շաղկապարար գործածվում, այժմ լեզվում սկսեցին ավելի հաճախակի հանդես գալ այդ գերով (մինչ, քանի, միայն):

Փառանաբերական ուրեկ ձևույթով կազմված շաղկապները կարող են լինել թե՛ պարզ և թե՛ բարդ: Սրանք առաջացել են զանազան հոլովաձևերում ու խոնարհման ձևերում կայունանալու և քարանալու ճանապարհով: Սկզբնական շրջանում՝ այս շաղկապները դեռ լիովին չեն խզում իրենց կապը անունների կամ բայերի բառական և քերականական կոնկրետ նշանակությունների հետ. սակայն, երկարատև գործածությունից հետո, նրանք իրենց այդ նոր պաշտոնում բառական և խոսքի մասային նոր արժեք են ստանում: Այս երևույթը հատուկ է ընդհանրապես չթերթող խոսքի մասերին՝ մակբայներին, կապերին և շաղկապներին: Հիշյալ ճանապարհով կազմված շաղկապներից են՝ ուրովհետև, այնուամենայնիվ (այսուամենայնիվ), ըստ որում, համենայն դեպս և այլ բարդ շաղկապներ և գոնե, չնայելով, չնայած, կարծես, ասես պարզ շաղկապները: Վերջին հինգը աշխարհաբարյան շաղկապներ են:

Ռուսերենի *несмотря* շաղկապի ազդեցությամբ կազմված ձևեր են չնայելով և չնայած շաղկապները*, որոնցից առաջինը ավելի գործածական էր XIX դարի երկրորդ կեսին, իսկ մյուսը՝ XX դարում: Բայական ծագում ունեն նաև կարծես և ասես շաղկապները, որոնք արդի հայերենում եղանակավորող բառի կիրառություններ էլ ունեն: Սրանք որպես շաղկապ ձևավորվել են այն ժամանակ, երբ, աստիճանաբար կայունանալով կապակցական իրենց պաշտոնում, կորցրել են բայերին հատուկ թե՛ ժամանակի և թե՛ սեռի կատեգորիաները:

Պարզ շաղկապների այս բաժինը ավարտելու համար մնում է խոսել մակբայական կազմություն ունեցող այն պարզ անանցավոր բառերի մասին, որոնք զրարարում թեև կանոնավոր կերպով մակբայական գործածություն ունեն. սակայն արդի հայերենում ստացել են բացառապես կապակցական ֆունկցիա: Այդ բառերից են հետևաբար, հետևապես հետևանքի շաղկապները և այլապես բարդ, որը չնայած մի ժամանակ դեռ որպես մակբայ գործածվում էր. սակայն այժմ հիմնականում շաղկապ է:

Որպես եզրակացություն այս բաժնի, պետք է ասել, որ արդի հայերենի կազմությամբ պարզ շաղկապները իրենց քանակով գիշում են բարդ շաղկապ-

* Սրանք միամասնակ կապական կիրառություններ էլ ունեն:

ներին, որոնց առաջացումն ու զարգացումը մշտական երևույթ է լեզվում: Պարզ շաղկապների աճը կարող է կատարվել միմիայն ի հաշիվ մյուս խոսքի մասերի (խոսքի մասային փոխանցումների ուղիով), մինչդեռ կազմությամբ բարդ շաղկապների աճը կատարվում է ոչ միայն այդ ճանապարհով, այլ գերազանցապես և, էլ, ուր, քե շաղկապների բաղադրությամբ կազմված հարադրությունների և այլ տիպի շաղկապական կապակցությունների միջոցով:

ԲԱՐԴ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Միանգամայն պարզ է, որ ըստ կազմության տեսակների, բարդ շաղկապները շեն կարող ունենալ բոլոր այն ձևերը, որոնք հատուկ են նյութական բովանդակություն ունեցող կամ լիիմաստ բառերին: Օրինակ, նրանք շունեն ոչ իսկական, ոչ էլ անիսկական համարված բաղնյուսական և կրկնական տեսակները: Բանն այն է, որ նման կազմություններ ունեցող բառերից և ոչ մեկը չի հարաբերակցել շաղկապների հետ և չի վերածվել շաղկապի: Այսպիսով, ընդունված տեսակներից շաղկապներին հատուկ են միայն կցական և ճարագրական բաղադրությունները:

1) ԿՑԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Շաղկապների կցական բաղադրության մասին խոսելիս պետք է տարբերել ևստևյալ տարատեսակները.

ա) Բուն կցականներ, որոնք երբեմնի շարահյուսական կապակցության բաղադրիչ մասերի ձուլումից են առաջացել (որովհետև, այնինչ և այլն):

բ) Այնպիսիները, որոնք երկրորդ բաղադրիչը շաղկապ է (և, գի), ինչպես՝ այլև, որպեսզի, քեև և այլն:

Մենք այս վերջին տեսակը առանձնացրինք բուն կցականներից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ շաղկապներով կազմված կցականները իրենց բաղադրիչ մասերի փոխհարաբերության և սերտության տեսակետից ըստ էության տարբերվում են լիիմաստ բառերից կազմված կցականներից:

Քննենք գրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին.

ա) Բուն կցականներ.

1. Այնինչ — գրաբարում այս բառը գրվում էր անշատ: ՆՀԲ-ում չի նշվում այս բառի ոչ մի շաղկապական գործածություն: Գրաբարում շատ տարածված էր այնինչ բառի «նոր նոր, իսկույն, երբ որ դեռ» ժամանակի իմաստով ունեցած գործածությունները, որտեղից անշուշտ հետագայում զարգացել է հակադրական շաղկապի նշանակությունը (համեմատի ժամանակի իմաստ ունեցող բառերից շաղկապի փոխանցումը հետևյալ բառերի մեջ՝ մինչդեռ, ապա, այն ժամանակ, երբ և այլն): Այս նույն երևույթը նկատվում է նաև ուրիշ լեզուներում:

2. Այնպես — դեռ գրաբարում միասին էր գրվում, սակայն շաղկապական գործածություն չունենր: Արդի հայերենում, միանալով ուր շաղկապի հետ, դարձավ հետևանքի շաղկապ: Վերջերս այնպես բառը սկսել է, առաջիմ դեռ շատ օտարով, կապակցական դեր կատարել, պատճառական անորոշ երանգ տալով շաղկապվող երկրորդական նախադասությանը:

3. Այնուամենայնիվ (այսուամենայնիվ) — գրաբարում սովորական շարահյուսական կապակցություն էր, իհարկե առանձին գրությամբ, Արդի հայերեն

սում այս շաղկապը ձեռք բերեց շաղկապական արժեք արտահայտելով հակադրական հարաբերություններ: Զուրկ չէ նաև եղանակավորող բառի կիրառությունից: Առաջին և երկրորդ բաղադրիչները գործիական հոլովով են:

4. Այնքան — ավանդված հետմետրոպայան շրջանում՝ միասին գրությամբ, Գրաբարում որպես շաղկապ չէր գործածվում: Վերջերս սկսել է ձեռք բերել շաղկապական արժեք՝ թույլ կերպով շեշտված պատճառական երանգով: Գործածվում է նաև ու շաղկապի հետ միասին՝ այնքան ու ձևով:

5. Այսինքն — գրաբարյան տեքստերում թե՛ առանձին, թե՛ միասին գրությամբ: Հավանաբար դեռ չէր կայունացել որպես մի ամբողջական բառ: Գործածվում էր նաև այսինքն է ձևով: Հենց գրաբարում դերանվանական արժեքի հետ միասին ուներ նաև շաղկապական արժեք: Արդի հայերենում հանդես է գալիս որպես մեկնական շաղկապ և գրվում է միշտ միասին:

6. Այսուհանդերձ (այնուհանդերձ) — առաջին բաղադրիչը գործիական հոլովով: Որպես շաղկապ տարածված է հայերենում և արտահայտում է հակադրություն:

7. Ինչպես — այս բառը չենք գտնում ոչ նՀԲ-ում և ոչ էլ Առձեռն բառարանում: Անկասկած աշխարհագրական կազմություն է՝ ինչ+պես (հմտ. ուր+պես): Արդի հայերենում, ի թիվս այլ կիրառությունների, հանդես է գալիս նաև որպես շաղկապ:

8. Մինչդեռ — կազմված է մինչ+դեռ բաղադրիչներից: Գրաբարում ժամանակի մակրայ: Երբեմն օգտագործվում էր նաև որպես շաղկապ: Արդի հայերենում տարածված է գերազանցապես շաղկապական կիրառություններով՝ արտահայտելով հակադրություն և երբեմն էլ ժամանակ:

9. Նույնպես — կազմված նույն+պես բաղադրիչներից: Գրաբարում, ուր այն մակրայ է համարվում, հանդիպում ենք նաև շաղկապական կիրառությունների, ինչպես՝

Կաթիլ հան է զմարդ ի տան է, նույնպես և կին անզգամ ի տան է իրմ է զայր (նՀԲ, հտ. II, էջ 441):

Արդի հայերենում գերազանցապես շաղկապական գործածություն ունի և արտահայտում է ներառական հարաբերություններ:

10. Ուրովհետև — մակրայ և շաղկապ է համարված նՀԲ-ում, մինչդեռ բերված օրինակները շաղկապական են: Արդեն գրաբարում միասին էր գրվում: Իրկու բաղադրիչներն էլ գործիական հոլովով են:

բ) Շաղկապներով կազմված կցականներ: Այս բառը շաղկապների առաջին բաղադրիչները սովորաբար չթեքվող խոսքի մասեր են՝ մակրայներ, կապեր և շաղկապներ, որոնք բոլորն էլ հենց գրաբարում, ի թիվս իրենց խոսքի մասային այլ կիրառությունների, ունեցել են կապակցական, շաղկապական գործածություններ: Այնուհետև, միանալով որոշ շաղկապների հետ, այս բառերը ձեռք են բերել միմիայն որպես շաղկապ հանդես գալու շարահյուսական հատկանիշ, բացառությամբ մինչև բառի, որ արդի հայերենում ունի նաև այլ կիրառություններ: Քննենք այդ շաղկապների կազմությունը.

1. Այլև <այլ+և, կրկին շաղկապ: Գրաբարում դեռ առանձին գրությամբ: Հակադրական և միավորիչ շաղկապների կցումից առաջացել է ոչ հակադրական հարաբերություն արտահայտող շաղկապ:

2. Թեպետև — կրկին շաղկապ: Գրաբարում հանդիպում է թե՛ առանձին,

թե՛ միասին գրությամբ. նույնը և այժմ: Այս շաղկապը հետաքրքրական է նրանով, որ առաջին (թե) և վերջին (և) բաղադրիչները շաղկապ են:

3. Թեև <թե+և, կրկին շաղկապ, նաև առանձին գրությամբ: Արդի հայերենում միշտ միասին: Առաջին բաղադրիչը անշուշտ թեական իմաստ ունեցող թե շաղկապն է:

4. Մինչև <մինչ+և: Գրաբարում հանդես էր գալիս երեք խոսքի մասնարժեքով՝ մակբայի, կապի և շաղկապի: Ընդհանուր առմամբ այդպես էլ նաև արդի հայերենում, եթե հաշվի չառնենք, որ մակբայական համարված նրա այն կիրառությունները, երբ ժամանակի իմաստով երկրորդական նախադասություններ են կապակցվում գլխավորին, ավելի ճիշտ կլինեին համարել շաղկապական, ինչպես

Մինչև դուք բոլորդ չգնաք, ես տեղից չեմ շարժվի:

Հիշյալ բնույթի կիրառությունները մակբայական են համարված նաև զրաբարում (տե՛ս ՆՀԲ, հտ. 11, էջ 277), Գրաբարում այս բառը շաղկապ է համարվում, երբ կապակցում է հետևանքի և չափի երկրորդական նախադասություններ, որոնք շատ անգամ անորոշ դերբայով են, ինչպես.

Այնպէս սիրեաց աստուած զաշխարհ, մինչև ղորդին իւր միածին ետ:

Ջարմացան ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս:

Մինչև շաղկապի այս կիրառությունները տարածված են նաև ժամանակակից հայերենում, ուր հաճախ այս բառը հարադրվում է ոչ շաղկապի հետ, մի բան, որ հանդիպում ենք նաև զրաբարում, և որ ՆՀԲ-ն համարում է ուսմական:

5. Նաև <նա+և, կրկին շաղկապ: Գրաբարում թե՛ միասին և թե՛ առանձին գրությամբ:

6. Որպեսզի <որպես+զի: Գրաբարում միշտ առանձին. այժմ միասին: Ունեցել է մակբայական, կապական և շաղկապական կիրառություն:

Չափազանց հետաքրքրական է, որ որպես բառը զրաբարում ունեցել է նպատակի շաղկապի իմաստ «որպեսզի» նշանակությամբ, ինչպես.

Ի նմանէն խնդրեսցես դու, որպէս ուղղեսցին ճանապարհք քո (ՆՀԲ, հտ. 11, էջ 537):

Ձի շաղկապի հավելումը որպես բառի վրա ընդգծեց ու ավելի որոշակի դարձրեց նրա նպատակի նշանակությունը՝ սահմանափակելով նրա կիրառությունների շրջանակը միայն շաղկապական գործածությամբ: Որինակ՝

Առնեն, որպէս զի փառաւորեսցին (ՆՀԲ, հտ. 11, էջ 537):

7. Քանզի <քան+զի: Արեւելահայ գրականում գրեթե անդործածական.

Կցական կազմություն ունեցող վերոհիշյալ շաղկապների մասին բերված փաստերից երևում է, որ արդի հայերենում գործածվող այս 19 շաղկապներից 16-ը եղել են նաև զրաբարում՝ մեսրոպյան կամ հետմեսրոպյան շրջանում: Հենց զրաբարում նրանք շաղկապի են վերածվել խոսքի մասային հարաբերակցության ճանապարհով: Հետևաբար այդ շրջանի համար էլ մենք իրավունք չունենք կցական բարդությունը համարել շաղկապների բառակազմական միջոցներից մեկը, լեզվի կապակցական միջոցների հարստացման աղբյուրներից մեկը:

Նկատելի է, որ կցական կազմություն ունեցող շաղկապների թիվը արդի հայերենում զրաբարի համեմատությամբ քանակապես չի աճել: Սակայն, շնայած այդ բանին, հիշյալ կազմությամբ շաղկապները որոշակի դարձացում են

ունեցել, ինչպես տեսանք, գրաբարից ավանդված արդի հայերենի 16 շաղկապներից ոչ բոլորն էին այդ շրջանում շաղկապական կիրառություն ունեցել, մինչդեռ այժմ նրանք բոլորն էլ հանդես են գալիս կապակցական դերով՝ լիակատար կամ մասնակի ձևով հարաբերակցելով շաղկապների հետ, իսկ մինչդեռ և նույնպես շաղկապները հասել են այնպիսի աստիճանի, որ գործածվում են միայն որպես շաղկապ:

2) ՀԱՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Այսպես ենք անվանելու կազմությամբ բարդ բոլոր այն շաղկապները, որոնց բաղադրիչները գրվում են անջատ, բայց որոնք արտահայտում են մեկ քննադատական շաղկապական իմաստ: Որպես կանոն այդ բաղադրիչներից երկրորդը գրեթե միշտ շաղկապ է լինում: Երբ խոսք է լինում արդի հայերենի շաղկապական միջոցների զարգացման մասին, միշտ պետք է նկատի ունենալ այս ճանապարհով կատարվող կապակցական միջոցների հարստացումը:

Եվ իրոք, եթե արմատական շաղկապները մնում են անփոփոխ լեզվի զարգացման տարբեր շրջաններում, եթե բառահարաբերական որևէ ձևով եղած շաղկապները սահմանափակ թիվ են կազմում, եթե կցական բարդությամբ եղած կազմությունները հիմնականում, դեռ գրաբարում, գոյություն են ունեցել և այլ խոսքի մասերից են փոխանցվել շաղկապի, ապա հարադրական շաղկապները անընդհատ աճում ու բազմապատկվում են՝ արտահայտելով լեզվին անհրաժեշտ նորանոր հարաբերություններ ու իմաստներ, տարբեր ոճական նրբություններ ու երանգներ:

Շաղկապական միջոցների հարստացման այս անալիտիկ ուղին հատուկ է ոչ միայն արդի հայերենին, այլև ռուսերենին, ֆրանսերենին և ընդհանրապես մյուս լեզուներին*:

Ի տարբերություն ֆրանսերենի, որտեղ, շատ քիչ բացառությամբ, գրեթե բոլոր հարադրական շաղկապները կազմված են que «որ» շաղկապով, արդի հայերենում բաղադրյալ շաղկապների կազմում հանդես է գալիս ոչ միայն որ «que» շաղկապը, այլև քե, և, էլ շաղկապները: Այսպիսով ստեղծվում է հարադրական շաղկապների մի հարուստ համակարգ: Բացի դրանից, բավական մեծ թիվ են կազմում նաև սովորական հարադրությունները երկու կամ երեք բառի, որոնք նույնպես շաղկապի նշանակությամբ են հանդես գալիս:

Ստորև տալիս ենք այդ շաղկապներով եղած կազմությունները, առանց կանգ առնելու նրանց արտահայտած իմաստային հարաբերությունների վրա:

ա) Որ շաղկապով կազմված ճարտարություններ: Սրանք բոլորն էլ ստորադասական հարաբերություններ են նշում: Ռե՝ քանակով և թե՝ որական հասկանիչներով հատուկ տեղ են գրավում հարադրական շաղկապների կազմում: Պետք է նկատել նաև, որ սրանք բոլորն էլ աշխարհաբարյան կազմություններ են, քանի որ գրաբարում հնարավոր չէ ենթադրել որևէ հարադրություն առ շաղկապով, երբ վերջինս որպես շաղկապ հատուկ չէր գրաբարին և նրա գործածություններն էլ որպես անկանոնություն էին դիտվում: Ահա այդ շաղկապները՝

Այնքան որ, այնքանով որ, այնքանով որքանով որ (սրանք վերջերս են տա-

* Հարադրական շաղկապները շատ տարածված են եղել նաև գրաբարում և զարգացման լայն հեռանկար են ունեցել, սակայն գրաբարի, որպես կենդանի խոսակցական լեզվի, անկումից հետո բնականաբար կանգ է առել նրանց զարգացումը:

րածվել լեզվում, հատկապես վերջին երկուսը), այնպես որ, դե որ (չնայած նար-Դոսի մոտ հանդիպում ենք, բայց ժողովրդական պիտի համարել), երբ որ (նաև միասին), քե որ, ինչպես որ, հակառակ որ (կապակցական կիրառություններ է սկսում կատարել լեզվում), հենց որ, մանավանդ որ, մի բան որ, մինչև որ, նամանավանդ որ, ոնց որ (ժող. բնույթի), չնայած որ, չնայելով որ (երբեմն ստորակետով բաժանված, մանավանդ հին հեղինակների մոտ), բանի որ և այլն: Բարբառային և ժողովրդական պիտի համարել բա որ, ամա որ, չունի որ և այլ ձևերը, որոնք մուտք են դործել գրական լեզվի մեջ՝ տեքստին համապատասխան ժողովրդական խոսքի կոլորիտ տալու նպատակով: Կան նաև ...այն պատճառով, որ, ...այն նպատակով, որ, ...այն բանի համար, որ, չնայած այն բանին, որ և շատ ուրիշ նման ձևեր, որոնք արդի հայերենում չնայած կապակցական դեր են կատարում, բայց դեռ զգալի է նրանց մեջ հարաբերյալի և հարաբերականի կապակցությունը, որի համար էլ բաժանված են ստորակետով (համեմատիկ ուսերենի ПОТОМУ ЧТО, ДЛЯ ТОГО ЧТОБЫ և ուրիշ շատ ձևեր, ուր արդեն այդ բաղադրիչները դիտակցվում են որպես մեկ ամբողջություն կազմող շաղկապական բառեր՝ առանց ստորակետով բաժանված լինելու): Հարաբերյալի և հարաբերականի միջև եղած կապը նկատելի է նաև այն դեպքում, երբ ...այնպես, որ և... այնքան, որ ձևերը բաժանված են լինում ստորակետով, ինչպես.

Նա երգում է այնպես, որ բոլորը հիանում են:

Նա վազեց այնքան, որ ուժասպառ ընկավ:

Թվարկված հարադրական շաղկապները արտահայտում են պատճառի, հետևանքի, պայմանի, ժամանակի, զիջական, համեմատության հարաբերություններ, մի խոսքով գրեթե բոլոր այն իմաստները, որոնք հատուկ են ստորադասական շաղկապներին: Սա անշուշտ բացատրվում է այն հանգամանքով, որ նրանց երկրորդ բաղադրիչը (որ) նույնպես կարող է գործածվել այդ նշանակություններով, ինչպես նաև բացատրական և նպատակի իմաստներով, բացառությամբ զիջականի: Եվ պարզ է, որ նման բազմիմաստ շաղկապ միայն կարող էր դառնալ շաղկապական ընդհանուր բաղադրիչ տարբեր նշանակություններ ունեցող վերի հարադրական շաղկապների համար: Այդպես է սաև ուսերենում և ֆրանսերենում, ուր ЧТО և QUE բառերը ստորադասական շաղկապների մի քանի իմաստներով կարող են հանդես գալ լինելով միաժամանակ հարադրական շաղկապների ամենակարևոր և ամենատարածված բաղադրիչները:

բ) Խե շաղկապով կազմված հարադրություններ: Չնայած սրանք լեզվում մեծ թիվ չեն կազմում, բայց հետաքրքրական են նրանով, որ ծագում են դեռ գրաբարից, քանի որ այնտեղ այդ շաղկապը բավական տարածված էր: Նկատելի է նաև այն, որ բոլոր դեպքերում էլ քե շաղկապը հարադրվել է ձեթե նշանակությամբ, չնայած որ պայմանի իմաստն այժմ չի զգացվում:

դ) Եվ շաղկապով կազմված հարադրություններ: Ավելանալով կապակցական դեր կատարող այս կամ այն բառի վրա՝ և շաղկապը իմաստային ոչ մի փոփոխություն չի մտցնում այդ բառերի նշանակությունների մեջ: Այս շաղկապով եղած հարադրությունները բավական տարածված էին նաև զրաբարում, ինչպես՝ ուստի և, ուրեմն և, քեպլտ և (նաև միասին), բայց և, սակայն և այնպես և այլն: Արդի հայերենում առավելապես տարածված են հետևյալները՝ ուստի և, քեկուզ և, քեպետ և (դրվում է նաև միասին), ինչպես և, ուրեմն և,

նույնպես և, ինչպես... այնպես և, բայց և այնպես: Այս հարադրական շաղկապները պետք է արդեն դիտել որպես մեկ ընդհանուր շաղկապական արժեք ներկայացնող բառեր: Հետագայում սրանց բաղադրիչների ձևումից կարող են առաջանալ այնպիսի ձևեր, ինչպիսիք են նաև, այլև, բեև շաղկապները, որոնց բաղադրյալ լինելը դրեթե չի գիտակցվում:

դ) էլ շաղկապով կազմված հաճախորդություններ: Սրանցից արդի հայերենում տարածված են հետևյալները՝ ինչքան էլ, որքան էլ, այն էլ, ինչպես...այնպես էլ, կամ էլ շաղկապները, ինչպես նաև ուր, որտեղ, երբ, ինչ, ինչպես և այլ հարաբերական դերանուններով կազմված ուր էլ, որտեղ էլ, երբ էլ, ինչ էլ, ինչպես էլ կապակցական բառերը, որոնք անշափ հարստացնում են արդի հայերենի շաղկապական համակարգը արտահայտչական և ոճական կարևորագույն հատկանիշներով:

Արդի հայերենում տարածված է նաև հարադրական շաղկապների մի այլ խումբ, կազմված՝ 1) կամ որևէ մի այլ շաղկապով. 2) կամ էլ որևէ բառով:

Առաջին տեսակն են ներկայացնում հետևյալ շաղկապները՝ ապա ուրեմն, ապա բե ոչ, ինչ է բե, բե չէ, բե ոչ, չէ բե: Սրանք ներկայացնում են արդեն շաղկապական կուռ ամբողջություն դարձած ձևեր և բոլորովին չեն կարող նմանվել շաղկապների պատահական կցումից ստացված այն ձևերին, որոնք միշտ էլ հանդիպում են լեզվում, ինչպես՝ ուր երբ, բայց երբ, բայց որովհետև, օրովհետև երբ և այլն, որոնց առաջին բաղադրիչները սովորաբար կապվում են նախորդ նախադասության կամ պարբերության հետ, իսկ երկրորդները՝ հաջորդ պարզ կամ բարդ նախադասության բովանդակությանն են վերաբերում, ինչպես.

Թագուհին թեպետ կարող էր ամբողջ բանալիներն ընդմիշտ հավատալ նրան, իբրև բերդակալի, բայց (նախորդ) որովհետև (հաջորդ) ժամանակը շար էր, և շարունակ լուրեր էին հասնում, թե այս կամ այն բերդը գրավվել է թըշնամուց բերդակալի թուլությանը կամ պահնորդների մատնությանը, ուստի թագուհին... (Մուրացան, Երկերի ժողովածու, հտ. III, Երևան, 1952, էջ 21):

Երկրորդ տեսակն են ներկայացնում, ինչպես ասացինք, այն կապակցությունները, որոնց բաղադրիչները շաղկապներ չեն, ինչպես՝ ըստ որում, քանի որ, ուր մնաղ, համեմալն դեպս. այն ժամանակ, երբ, ընդ որում, այն է. այնքանով որքանով և այլն, որոնք այս կամ այն կերպ կապակցական դերեր են կատարում: Պետք է շեշտել սակայն, որ այս հարադրական շաղկապները դեռ որոշ կապի մեջ են գտնվում համապատասխան խոսքի մասերի հետ և հմաստաբանական ու լեքսիկական այն հատկանիշները չեն ձեռք բերել, ինչ որ արմատական, երբեմնի բաղադրյալ կամ կցական կազմություն ունեցող շաղկապները:

Վերջապես կապակցական դեր են կատարում նաև շաղկապական արտահայտությունները կամ շաղկապական դարձվածաբանական միավորները: Անհրաժեշտ է նշել, որ նման ձևերը տարածված չեն արդի հայերենում և ուսեթենի ազդեցության արդյունք են. օրինակ՝ ոչ ոք չէր, երբ ոչ, ոչ այլ ինչ է, երբ օչ, ոչ այլ ինչ է, բայց երբ և այլն:

Որպես ընդհանուր ելրակացություն, հարկ ենք համարում նշել հետևյալը

1. Դրաբարում կապակցական դերով հանդես եկող այն բառերը, որոնք ռեբին խոսքի մասային այլ կիրառություններ, արդի հայերենում, շաղկապական միջոցների վարդացման հետևանքով կամ վերածվել են շաղկապների:

կամ էլ այլ խոսքի մասերի հետ հարաբերակցող այնպիսի բառերի, որոնց մեջ գերիշխում է շաղկապական արժեքը: Բուն արմատական, երբեմնի բաղադրյալ և կցական բարդություններ կազմված շաղկապները, եթե արդի հայերենում, գրաբարի համեմատությամբ, փանակալեն չեն աճել, ապա աճել են ուրակակ սեկոլմից, խոսքի մասային շաղկապական արժեքով անհամեմատ ավելի յայն գործածություն ունենալու տեսակետից: Եվ իրոք, անկարելի է գտնել թեկուզ մի օրինակ, որ գրաբարում ավանդված որևէ լատի կապակցական կիրառությունները արդի հայերենում ոչ թե տարածված, այլ նվազած լինեին:

2. Փաստերը ցույց են տալիս, որ հնագույն ծագում ունեցող բուն արմատական շաղկապների գերակշռող մասը հնդեվրոպական ծագում ունի, մի բան որ վկայում է նաև հայերենի հնդեվրոպական ծագման մասին, Այնուհետև ալև հանգամանք, որ այդ արմատական 15 շաղկապներից 10-ը համադասական են, իսկ 5-ը միայն ստորադասական, մի անգամ էս գալիս է հաստատելու, այն թեզը, որ համադասական շաղկապները ծագումաբ ավելի հին են, քան ստորադասականները:

3. Այն, որ բարբառներում պահպանված է միայն բուն արմատական շաղկապների որոշ մասը, իսկ շաղկապների մյուս տեսակները բացակայում են նրանցում, փոխարինվելով օտար շաղկապներով, ենթադրել է տալիս, որ հայերենի երկու գրական ճյուղավորումները՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, իրենց կապակցական միջոցները հիմնականում փոխ են առել գրաբարից, ավելացնելով նրանց վրա նաև սեփական կազմությունները, որոնք թվով շատ շնչին են, եթե չհաշվենք հարադրական շաղկապները, որոնք, իրոք, աշխարհագրորում մեծ թափով զարգացան Այսպիսով, երկու գրական լեզուներն էլ իմանականում պահպանեցին գրաբարյան կապակցական միջոցները, իհարկե, իմաստային և կիրառական փոփոխություններով, առանց որոնց անհնար է ենթադրել լեզվի զարգացումը՝ բավական երկարատև մի ժամանակաշրջանից հետո (գրաբարից մինչև արդի հայերեն):

4. Հարադրական շաղկապների զարգացումը, ի տարբերություն այլ կազմություն ունեցող շաղկապների մյուս բոլոր տեսակների, արտահայտվել է նաև քանական ցուցանիշներով: Այսպես, գրաբարը չի ճանաչում ուր և էլ շաղկապներով կազմված հարադրություններ, մինչդեռ արդի հայերենը գրեթե ամբողջությամբ օգտագործում է գրաբարյան հարադրությունների բոլոր տեսակները: Այսպիսով, երբ խոսք է լինում արդի հայերենի կապակցական միջոցների զարգացման և հարստացման մասին, միշտ նկատի պետք է ունենալ կազմության հարադրական եղանակը:

5. Բուն արմատական շաղկապները, իրենց գործածությամբ կապված լինելով հայոց լեզվի զարգացման գրեթե բոլոր շրջանների հետ և պահպանած լինելով նախորդ շրջաններում ունեցած իմաստային և ոճական շատ կիրառություններ (որոնց վրա քնականաբար ավելացել էն նաև բարբառներում և մոլորական լեզվում տարածված նոր իմաստային գործածություններ) չնայած թվով սահմանափակ են, սակայն արդի հայերենի շաղկապական համակարգում շատ մեծ կշիռ ունեն: Գուցե չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ լեզվի շաղկապական կիրառությունների մոտ կեսը բաժին է ընկնում նրանց: